

ԿՐՑՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԷՌԻԹԻՒՆԸ.

«Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն:

Յովհ. Ա. 1—2.

Որքան բարձր են լինում լեռները, այնքան առաւել հարց է ծագում, ինչպիսի զօրեղ դէպքերի շնորհիւ են նրանք առաջ եկել: Բլուրների առաջ գալը բացատրելը դժուար չէ, բայց Ալպերի ծագման մասին խօսելը մի մութը գործ է և գաղտնիք: Իսկապէս, ինչպէս կարող են նրանք առաջ եկած լինել, Քանի՜ հաղարաւոր տարիների պատմութիւն ունի այն կազմուածքը, որի առաջ մենք կանգնած ենք: Ի՞նչ են նրա գլխաւոր տարրերը:

Ինչպէս բլուրներից բարձր Ալպեան սար գերազանցում է Յիսուսը միւս մարդկանցից: Այժմեան պատմութեան նշանաւոր բնաւորութիւնները առաւել հեշտ կարելի է պարզել քան թէ, նրան: Մարդ հասկանում է նրանց իրենց շրջապատից, իրենց ժամանակից, իրենց ժողովրդից և անձնական դրութիւնից, նրան, սակայն, դեռ ևս երկար ժամանակ չեն հասկանում, եթէ մինչև իսկ նրա ժամանակակիցներին ճանաչում են: Նա շրջում է նրանց մէջ, սակայն նա շատ քիչ է նրանց պատկանում: Հին կորցրած Մեծութիւնը զարթնում է նրա մէջ: Նա մի մարգարէ է, նա Դաւթի Որդին է, նա Աբրահամի Որդին է, նա մարդու Որդին է: Այս արտայայտութիւններից իւրաքանչիւրը մի փոքր բարձրացնում է այն քօղը, որի տակ նրա ծնունդն ու աճումը սքողուած են: Նա իւր ժողովրդի նախնեաց կենսական մեծ զօրութեան ամփոփումն է, մարդկութեան մէջ մի մեծ ալիք, իրենից առաջ անցած բոլոր մեկնարա-

նույն թիւներն ի նպատակակէտ: Մի՞թէ առաւել չէ նա: Ո՞վ կարող է նրան ուղիղ կերպով ցոյց տալ իւր էութեան մէջ:

Յիսուս ինքը իրեն շրջապատող խորհրդաւորութեանը կատարելապէս ծանօթ էր: Նա գիտէր, թէ մարդկութեան համար ի՞նչ դժուարութիւն պիտի լինի նրան իրեն բացայայտելու համար: Ուստի հարցնում է նա իւր աշակերտներին. «զո՞ որ ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ:... Իսկ դուք զո՞ որ ասէք զինէն թէ իցեմ» (Մատթ. ԺԶ. 13, 15): Ի՞նչ պէտք է նրանք պատասխանէին: Նա առաւել վեր բարձրացաւ, քան ինչ որ մարդկային սովորական խօսքերով արտայայտել կարելի էր: Ոչ մարդարէն, և ոչ Դաւիթի որդին կարող էր գոհացում տալ. «Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ» (ԺԶ. 16): Պետրոսն էր այդպէս խօսողը. Յիսուս երանելի անուանեց նրան այդ ճանաչողութեան համար, բայց արգելեց նրան այդ մասին խօսել: Յիսուս չէր կամենում, որ իւր աշակերտները մի պատրաստի բանաձևով բաւականանային: Նա գիտէր այն վտանգը, որ առաջ էր գալիս, երբ մեծ խօսքերը արտասանւում էին առանց սեպհական անձնական ներքին զիտակցութեան: Ուստի երջանիկ անուանեց այն միակ էակին, որ մի խոր արտայայտութիւն առաւել ևս խոր ճշմարտութեան մէջ էր գտել, սակայն նա արգելեց, երբ իւր ներկայութեամբ իւր մասին մի տեսակ շողկապող դաւանանք առաջ եկաւ:

Այդ է պատճառը, որ առաջին քրիստոնեաների մէջ Քրիստոսի մասին դեռ ևս մի անփոփ նկարագիր գոյութիւն չունէր: Հաւատը խօսքեր էր փնտրում իւր խոստովանութիւնը արտայայտելու համար: Մենք տեսնում ենք, թէ ի՞նչպէս առաջին քրիստոնէութեան երեք մեծ գրողներն իւրաքանչիւրը՝ Պետրոսը, Պողոսը և Յովհաննէսը, Յիսուս Քրիստոսի էութեան գաղտնիքը խօսքերով արտայայտել է կամենում: Նրանք խօսում են Աստուծոյ Որդու մասին, Տիրոջ մասին, այն մասին, որ նա Աստուծոյ պատկերն էր, և որ նրա մէջ աստուածային կատարելութիւնն էր մարմնացել, նրանք անուանում են նրան Աստուծոյ

յայտնութիւն մարմնի և աստուածային փառաց փայլի մէջ, իսկական պատկեր նրա էութեան: Իսկ այն մեծ իրողութեան մասին, որ Յիսուսի ծննդեան հիմքը գերերկրային էր, նրանց մէջ ոչ մի կասկած չծագեց, միայն այն մասին էին աշխատում, որ գերմարդկայինը մարդկային լեզուով արտայայտեն: Այդ ասելու համար ամենակատարեալ եղանակը Յովհաննէսն էր գտել, սիրոյ աշակերտը, որ աւելի երկար ապրեց քան միւս առաքեալները: Մերութեան հասակում գրիչ վերցրեց՝ Ամենաբարձրեալի մասին գրելու, ինչ որ նա Յիսուսի մասին ասել կարող էր, և երկրպագելով գրեց նա մինչ յաւիտենականութիւն հասնող իւր աւետարանի առաջին խորհրդաւոր տողերը. «Իսկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն»: Նրա հաւատոյ կեանքը այդ խօսքերով իւր ամենաբարձր գագաթնակէտին հասաւ: Եւ նրան էլ իւր անտեսանելի Աստուածը ասել է. «Երանի քեզ, Սիմոն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է»: (Մատթ. ԺԶ. 17):

Գերման. փոխադրեց Ա. Վ.

